մեր արդար դատաստանաւ արար մեզ, քանզի եթէ Տէր և Արարիչն մեր այնքան միայն սիրէր մեզ որպէս մեք սիրեմք որդիս և դստերս մեր, առաւելագոյն դատաստան ընդունելոց էինք մեք, վասն որ ոչ ոք հայր զի տացէ որդւոյ իւրոյ իբր հարիւր քանքարս երծաթոյ առ 'ի ժառանգութիւն, և 'ի նմանէ միմիայն լոման մի արդելեսցէ որդւոյն իւրոյ, զի մի մերձեսցի առ 'ի լոմանն, և որդին այն եթէ այնքան անառակեսցի որ ոչ թէ միայն ոչ բաւեսցի հարիւր քանքարաւ, նա-ևս համարձակեսցի և ձկտեսցի միտս իւր առ 'ի յանդգնութիւն հրամանի հօր և ձեռնամուխ լինիցի ստանալոյ միայնակ լոմանն և յատկապէս ստանայցէ, և թունաւոր լոմանաւն կոխիցէ Պատուիրան հօր իւրոյ և ապականեսցի բոլոր բնութիւնն իւր յանդգնութեամբ իւրով. երկայնամիտ լեր ընթերցող 'ի վերայ բարկութեան հօր սորայ, որ յանդգնութիւն որդւոյն յարուցանէ 'ի վերայ իւր. թէպէտ և որքան հայր սորայ զթածաբար ներել ևս թէ կամեսցի, այլ ոչ միտ հօր և ոչ արդարութիւն իրաւանց և ոչ բոլոր բնութիւն մարդոյ 'ի ներքոյ արեգական լռել կարէ ասելոյ, զի որդին այն բնութեամբ չար է, և 'ի ժամանակս բոլոր կենաց սորայ ոչ ոք ընդունի պաշտօն սորայ և ոչ ոք հաւատայ սմայ ոչինչ. կամիմ ասել՝ ով ոք որ անցանէ պատուիրանաւ, որում ինքն ըստ կամաւ յանձն էառ պահելոյ՝